

Ի գիտություն օտարերկրյա ուսումնական հաստատությունների շրջանավարտների

1. Օտարերկրյա ուսումնական հաստատությունների (ՀՀ-ում և այլ պետություններում գտնվող) **այս տարվա շրջանավարտները** dimord.am կայքում 2020թ. բուհերի ընդունելության քննությանը և մասնագիտությունների հայտագրմանը մասնակցելու նպատակով դիմում-հայտ լրացնելու համար իրենց ուսումնական հաստատության տնօրենի ստորագրությամբ և կնիքով պետք է տեղեկանք ստանան այս տարվա շրջանավարտ լինելու մասին, այդ տեղեկանքի /օտարալեզու տեղեկանքի դեպքում՝ դրոշմակնիքով՝ ապոստիլով հայերեն թարգմանությամբ/ և անձը հաստատող փաստաթղթի սքանն ուղարկեն Գնահատման և թեստավորման կենտրոնի info@atc.am էլեկտրոնային փոստին՝ անձնական համար ստանալու մասին դիմումին կից:

Գթկ-ից անձնական համարը ստանալուց հետո օտարերկրյա ուսումնական հաստատությունների այս տարվա շրջանավարտները dimord.am կայքում գրանցվում են իրենց էլեկտրոնային փոստով, ստեղծում են գաղտնաբառ և դիմում-հայտը լրացնելիս «ստեստատ» կամ «դիպլոմ» բաժնում նշում են ՏԵՂԵԿԱՆՔ:

Այնուհետև իրենց ուսումնական հաստատության ավարտական փաստաթուղթը ստանալուց հետո հուլիսի 1-ից մինչև հուլիսի 8-ը ժամը 18.00-ն նորից մուտք են գործում dimord.am կայք և իրենց դիմում-հայտում լրացնում ավարտական փաստաթղթի համարը /սերիան/ և գնահատականները: Այլ փոփոխություն դիմում-հայտում կատարել չի թույլատրվելու:

Ուշադրություն՝ հուլիսի 8-ին ժամը 18.00-ից հետո դիմում-հայտում ավարտական փաստաթղթի տվյալները լրացնելու հնարավորություն այլևս չի լինելու: Այն դիմորդները, ովքեր նշված ժամանակահատվածում չեն լրացնի ավարտական փաստաթղթի պահանջվող տվյալները, դուրս են մնալու բուհերի ընդունելության մրցույթից:

2. Օտարերկրյա ուսումնական հաստատությունների /այլ պետությունների տաարծքում գտնվող/ նախորդ տարիների շրջանավարտները dimord.am կայքում 2020թ. բուհերի ընդունելության քննությանը և մասնագիտությունների հայտագրմանը մասնակցելու նպատակով դիմում-հայտ լրացնելու համար պետք է իրենց ավարտական փաստաթղթի /օտարալեզու փաստաթղթի դեպքում՝ դրոշմակնիքով՝ ապոստիլով հայերեն թարգմանությամբ/ և անձը հաստատող փաստաթղթի սքանն ուղարկեն Գնահատման և թեստավորման կենտրոնի info@atc.am էլեկտրոնային փոստին՝ անձնական համար ստանալու մասին դիմումին կից:

Այնուհետև անձնական համարը ստանալուց հետո օտարերկրյա ուսումնական հաստատությունների նախորդ տարվա շրջանավարտները կայքում գրանցվում են իրենց էլեկտրոնային փոստով, ստեղծում են գաղտնաբառ և լրացնում դիմում-հայտը: